ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. ապրիլի 28-ից 30-ը Մոլդովա (ք. Քիշնև) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Լիլիթ Սարոյան

2. **ՁԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   2026թ. ապրիլի 28-30-ը Մոլդովա՝ ք. Քիշնև

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Եվրոպայի խորհուրդ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն «Բազմամակարդակ կառավարման մեթոդներ՝ ժողովրդավարական դիմադրողականության ամրապնդման և հանրային վստահության ձևավորման համար» խորագրով համաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   - Բազմամակարդակ կառավարման մոտեցումները՝ ժողովրդավարական կայունության և հանրային վստահության ամրապնդման նպատակով
   - Քաղաքացիների մասնակցության խթանումը և ներառական որոշումների կայացման մեխանիզմները
   - Տարբեր մակարդակների իշխանությունների միջև համագործակցության և համակարգման բարելավումը
   - Հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը տեղական և տարածաշրջանային մակարդակներում
   - Տարածքային և վարչատարածքային բարեփոխումների փորձը եվրոպական երկրներում
   - Թվային, խորհրդակցական և մասնակցային գործիքների կիրառումը ժողովրդավարական գործընթացներում
   - Քաղաքացիական հասարակության և համայնքների ներգրավման լավագույն փորձերը
   - Ինքնակառավարման մարմինների դերակատարությունը ժողովրդավարական կառավարման ամրապնդման գործում

- Ռեյկյավիկյան ժողովրդավարական սկզբունքների կիրառման և իրականացման շրջանակները
- Միջհամայնքային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացման հնարավորությունները
- Հանրային քաղաքականությունների մշակման և իրականացման ընթացքում բազմաշահառու համագործակցության կարևորությունը

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Մասնակցություն է ապահովվել «Multilevel Governance Approaches to Reinforce Democratic Resilience and Build Public Trust» միջազգային համաժողովին, որի ընթացքում տեղի են ունեցել թեմատիկ պանելային քննարկումներ, ելույթներ և աշխատանքային խմբերի նիստեր:

Համաժողովի շրջանակում քննարկվել են բազմամակարդակ կառավարման համակարգերի զարգացման, ժողովրդավարական կայունության ամրապնդման և հանրային վստահության բարձրացման հարցերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել պետական, տարածաշրջանային և տեղական իշխանությունների միջև արդյունավետ համագործակցության և համակարգման մեխանիզմներին:

Քննարկումների ընթացքում ներկայացվել են տարբեր երկրների փորձը վարչատարածքային և կառավարման բարեփոխումների իրականացման ուղղությամբ, այդ թվում՝ ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման, քաղաքացիների մասնակցության ընդլայնման և ներառական որոշումների կայացման գործընթացների վերաբերյալ:

Մասնակցել եմ «Multilevel governance and territorial administrative reforms: national perspectives from recent reforms in Finland, Ireland, Armenia, and Albania» թեմայով 2-րդ պանելային քննարկմանը որպես բանախոս:

Պանելային քննարկման ընթացքում ներկայացվել են Ֆինլանդիայի, Իռլանդիայի, Հայաստանի և Ալբանիայի փորձը բազմամակարդակ կառավարման և վարչատարածքային բարեփոխումների իրականացման ուղղությամբ: Քննարկվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության, հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև քաղաքացիների մասնակցության խթանման մեխանիզմները:

Քննարկման ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տարածքային և տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումները՝ անդրադառնալով համայնքների խոշորացման գործընթացին, բազմամակարդակ կառավարման զարգացմանը, տեղական ինքնակառավարման

մարմինների կարողությունների ամրապնդմանը և ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերին:

Պանելային քննարկման ընթացքում նաև բարձրացվել են ժողովրդավարական կառավարման ամրապնդման, հանրային վստահության բարձրացման, միջգերատեսչական և միջմակարդակային համակարգման, ինչպես նաև ներառական և մասնակցային կառավարման մեխանիզմների զարգացման հարցեր:

Համաժողովի ընթացքում ելույթներով հանդես են եկել Եվրոպայի խորհրդի, Եվրոպական հանձնաժողովի, ՏՀԶԿ-ի (OECD), ինչպես նաև տարբեր երկրների պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտների ներկայացուցիչներ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համաժողովը կրել է քննարկումային և փորձի փոխանակման բնույթ, որի շրջանակում պարտադիր իրավական ուժ ունեցող որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

Միաժամանակ, մասնակից երկրների ներկայացուցիչների միջև ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ շարունակելու մասնագիտական երկխոսությունը և փորձի փոխանակումը բազմամակարդակ կառավարման, վարչատարածքային բարեփոխումների և տեղական ինքնակառավարման ոլորտներում:

Համաժողովի արդյունքում ընդգծվել է բազմամակարդակ կառավարման՝ արդյունավետ մեխանիզմների ներդրման, պետական և տեղական մակարդակների միջև համագործակցության խորացման, ինչպես նաև քաղաքացիների մասնակցության և հանրային վստահության բարձրացմանն ուղղված բարեփոխումների շարունակականության կարևորությունը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առաջարկվում է շարունակել բազմամակարդակ կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում միջազգային փորձի ուսումնասիրությունն ու փորձի փոխանակումը:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

8 մայիսի, 2026թ.